

ԲԱԿՈՒՐ

ՆՁՈՎՅԱԼՆԵՐԸ

(պատմվածք)

Վաղ առավոտյան երկաթե դուռը զգույշ ձգեցի, որպեսզի նրա զրնգոցով չանհանգստացնեն հարևաններին, բանալին դրեցի մարզահագուստիս գրպանն ու Դադասյանի դպրոցի բակով շտապեցի դեպի այգին: Դպրոցի դարպասները բաց էին: Վազքով դուրս եկա մուտքից, հատեցի փողոցը: 55-րդ չվերթի վարորդը երկար նայեց իմ ետևից: Դանդաղ վազքով դեպի այգին էր ընթանում և բաց կանաչ արտահագուստով ծանրամարմին կինը: Ես վազքով առաջ անցա նրանից և ընթացա ծառուղով: Այսօրվա վազքս թեթև էր ու ավելի կանոնավոր: Ուրեմ լրիվ ապաքինվել եմ, ազատվել վիրուսի ճիրաններից, որը համակել էր և ողջ քաղաքը: Ես խմում էի դեղն ու 10 րոպե հետո զգում, թե ինչպես են վիրուսի բացիլները զղջում, որ հենց ինձ են որպես ապաստան ընտրել: Բարեբախտաբար, հերթական այս մի փորձանքից պրծա, ու հիմա վերականգնվում եմ ուժերս: Այգին ևս իմ հայացքում ոռողջ էր ու լիովին ապաքինված էներգետիկ ճգնաժամի տարիներին հասցված մահացու հարվածից, երբ քաղաքի բնակիչները վառարանի համար անխտիր հատում էին բոլոր ծառերը: Ուշ գարնանն ու ամռան սկզբին տեղած հորդ անձրևները այգին լցրել են կյանքով: Ծառերի տերևները փայլփլում էին: Ողջ այգին լցվել էր փափթած խոտով: Իհարկե, այն որոշակի վտանգ էր ներկայացնում: Օգոստոսին, երբ խոտը չորանում էր, ինչ-որ մարդիկ, հավանաբար, զվարճության համար, վառում էին խոտը, որից հրդեհ էր բռնկվում, այրում մատղաշ ծառերը: Ու այդ հրձիգների դեմ միակ պայքարի ձևը հասարակական գիրակցության բարձրացումն էր: Չկար մի ուժ, որը կանգնեցներ հրձիգներին, բռներ նրանց ձեռքը, պատժեր մի քանիսին, որ մյուսները չանեն դա:

Մի ագռավ աղեկտուր կռնչոցով եկավ, կառչեց ծառի ճյուղից: Քիչ անց հայտնվեց և նրան հետապնդող մյուս ագռավը, սրնթաց թռիչքով հասավ նրան, ու մի կատաղի մենամարտ սկսվեց: Այլևս չկարողանալով մնալ ծառի ճյուղին, նրանք նախընտրեցին գետնի վրա իջնել ու վերջնականորեն պարզել չլուծված հարցերը: Բայց թե ինչն էր այս կենաց և մահու կռիվի պատճառը, դժվար էր ասել: Մի կտոր պանրի համար հազիվ թե մնան թշնամանք ծագեր: Հավանաբար, այստեղ ավելի սկզբունքային հարցեր են լուծվում: Հաջորդ պահին այգու այս հատվածը լցվեց տասնյակ այլ ագռավների կռնչոցներով, որը համընդհանուր աղմուկի վերածվեց: «Ագռավների նախագահ են ընտրում», -մտածեցի ես: Համայնքի անդամները, գուցե և պատգամավորները հետևում են, թե հազարավոր տարիներով հաստատված

աստժն օրենքով ով պետք է «նախագահ» հռչակվի: Վերջապես, մենամարտողներից մեկը վերջին անգամ կտցահարեց փայտանին ու վեր թռավ, երկու հաղթական պտույտ գործեց ու երանը տարավ իր ետևից: Իսկ մյուսը, որ կողքի էր ընկել, մի կերպ ոտքի ելավ, սակայն անկարող էր թռչել: Երբ մոտեցա, նա սարսափահար կռնչաց: Շները, որ գիշերները թագավորում են քաղաքում, անպայման կորսան ու կպատռոտեն նրան, եթե մինչև երեկո չապաքինվի ու թռչի:

Ես վազում էի ծառուղով ու մտածում այս ամենի մասին:

Ծառուղու ձախ կողմում խիտ թփերի մոտ պառկած բոմժի փոխարեն նրա քրջեչի կույտն էր՝ ծածկված նրա կանաչ սավանով: Մի շաբաթ առաջ ես նկատել էի, որ գլխի տարօրինակ ցնցումներով շատ դանդաղ փորձում էր բարձրանալ տեղից ու նստել: Նա այս անգամ էլ գաղութից վերադառնալով իր տուն ու տեղը ավերված էր տեսել: Ծնողները չկային այլևս, իսկ ընտանիքը մեկնել էր անհայտ ուղղությամբ: Ձմռանը Սևանի կողմերում սառչել էր ոտքը, ու բժիշկները ստիպված անդանահատել էին: Հիշում եմ, ձմռանը դուլի մեջ կրակ էր վառում, տաքանում քնելուց առաջ, հետո փաթաթվում քրջերի մեջ, կծկվում ու քնում: Ամեն առավոտ զգում էի նրա օտարացած հայացքը: Արդեն վարժվել էր վաղ առավոտյան վազորդների ոտնաձայներին: Նրանց ընթացքով գուշակում էր, որ աշխարհում կյանքը դեռ շարունակվում է: Սակայն ամեն ինչ նրա համար օտար էր մնում: Մեծ սիրով կրկին բանտ կգնար: Հինգ անգամ դատվել էր ու հինգ անգամ էլ բանտ նստել: Բայց միշտ մի որևէ համաներումով ազատում էին ու դուրս անում բանտից: Բայց այս անգամ նա անընդունակ էր հանցանք գործելու: Գողական աշխարհն էլ նրան իրենը չէր համարում ու տիրություն չէր անում: Հարբեցողի անունից վեր չբարձրացավ: Մի ձմռան օր էլ տեսա, որ մեկը, երևի հեռավոր բարեկամներից, այցի էր եկել, ուտելիք ու խմիչք էր բերել: Դողդողացող ձեռքով բաժակը տարավ դեպի բերանը, արագ ընպեց, ձեռքի երեսով սրբեց շուրթերը:

-Ոտքերս պիտի գան պաչեն, ոտքերս...,-բարձրաձայն ու ոգևորված խոսեց նա: Եվ ահա նրա տեղը դատարկ էր:

Բոմժը երկար նայեց իմ ետևից:

Բոմժերի մի խումբ էլ քաղաքի ջրատար, գազատար խողովակների բաշխիչ ցեմենտապատ փոստրակում էր հանգրվանել, որտեղ կափյուրներ էին տեղադրված: Նրանց գլխավորը մեր շենքի Հակոբն էր: Թմրանյութերի ազդցության տակ նա դաժանորեն սպանել էր մորաքրոջը, դատապարտվել: Տասը տարի հետո նա ազտվում է, սակայն կինն ու որդին նրան չեն ընդունում, քանի որ նրա տեղը դիմացի հարևանի տղան էր զբաղեցրել: Թափառական կյանք էր վարում, մինչև որ գետնափոր խորշը իր համար որպես կացարան ընտրեց: Առավոտները խլուրդների

պես դուրս են հանում գլուխները, հերթով գնում կաթսայատան հակա չանի տակ միզելու, ապա հավաքվում են իրենց ընտրած ծառի տակ, ինչ-որ տեղից ինչ-որ կերպ հայթայթած օղի խմում, մինչև բոնժերից մեկը հասցնում է շուկայից հափշտակած հացի կտորներն ու պոմիդորը:

Հակոբը նայում էր ինձ ու ասես փորձում որսալ կարեկցող հայացքս: Ես դա չնկատել տվեցի ու անցա, մեջքից զգալով նրա հայացքը::

Մարզահրապարակից խայտաբղետ ձայներ էին լսվում: Աղջիկներն ու տղաները շատ դեպքերում վաղ առավոտյան այստեղ են գալիս ոչ այնքան լիցքային վարժություններ կատարելու, որքան իրար հանդիպելու և զրուցելու: Վազքի ընթացքում ծառերի արանքով մարզվողների բազմություն նկատեցի: Սովորաբար տասը հոգուց երեքն են ջանասիրաբար վարժություններ անում, իսկ մնացածները բարձրածայն խոսում են, այնպես, որ երկուհարյուր մետրից լսելի էր ձայները:

Ֆիզկուլտուրայի ուսուցիչ Շոթան աչքի պոչով հետևում էր վազքիս: Ես ավելի արագացրի ընթացքս, մարզահրապարակ հասնելով, մի քսան մետր քայլեցի՝ շնչառությունս կանոնավորելու համար, ապա, ըստ սովորության, քայլեցի ջրատար խողովակի վրայով: Շոթան զրուցում էր 75-ամյա թոշակառու օդաչուի հետ: Ավելի շուտ՝ ծերունին անընդհատ խոսում էր, իսկ Շոթան նրան չվիրավորելու համար հարց էր տալիս, որն էլ ասես ենթագիտակցականի ծալքերից բառաշարի նոր արտահոսքի առիթ էր ստեղծում, որն ինքը՝ նախկին օդաչուն ևս չէր կարող կանգնեցնել: Ասես ողջ քառասուն տարի այնտեղ՝ օդում, մեմակ մնալով չէր խոսել, և ահա թոշակի անցնելուց հետո դուրս էր թափում տարիների կուտակածը: Նա խոսում էր ինքնաթիռի ռադարի, լուկացիոն կայանների հետ կապի մասին, կրկնում էր դիսպետչեր-կարգավորողի խոսքերը՝ «Բորտ համար 806, բորտ համար 806, բորտ համար 806..., պատասխանի՛ր, բորտ համար 237, դու ինձ լսո՞ւմ ես, ո՞ւր է բորտ 806-ը, եթե տեսնես, անպայման տեղյակ կպահես մեզ...»:

-Իսկ ի՞նչ եղավ բորտ համար 806-ը,-հարցրեց Շոթան:

-Կորավ, ի՞նչ պետք է լիներ, խփեց հակառակորդը: Պատերազմի տարիներին...

Արդեն ավարտում էի մարզանքս, երբ մոտեցա պտտածողին:

-Աղջիկներն այսօր շատ շատ են,-ասաց Շոթան,-բոլորն էլ ուզում են սիրուն մարմին ունենալ:

-Իհարկե, սիրուններն ավելի թանկ արժեն,-ասացի ես,-մանավանդ թուրքիայում ու Էմիրաթներում:

-Ա~հ, ես այդ մասին չէի էլ մտածել,- ասաց Ֆիզկուլտուրայի ուսուցիչը:

-Կեսգիշերին տղաս Լոնդոնից զանգեց,-ասաց նախկին օդաչուն:

-Տղադ Լոնդոնում է,-հարցրեց Ֆիզկուլտուրայի ուսուցիչը:

-Բա ո՞նց,-հպարտացավ օդաչուն,-ասում է՝ «Չայր, ի՞նչ կարիք ունես, մի երկու օր էլ համբերիր, ռոճիկ ստանամ, մի չորսհարյուր դոլար կուղարկեմ»:

-Էդքան ուղարկում է՞,-հարցրեց Ֆիզկուլտուրայի ուսուցիչը,-ուրեմն կարգին տղա ունես:

-Ինձ թվում է, թե խոսքի մարզանքը վաղուց պիտի վերջացրած լինեիք,-Շոթային կշտամբեցի ես:

Իհարկե, եթե որդիս՝ Յովիկն այստեղ լիներ, անպայման կնախատեր ինձ, որ Կարնեզի էթիկայի կանոններին չեմ հետևում: Բայց նրա բացակայության օրերին, մանավանդ, որ նա այժմ բանակում է, ես ինձ ազատ եմ զգում Կարնեզիի ճնշումներից:

-Էդքան էլ տեղին չէր դրա ասածը,-դժգոհ քրթմնջաց ծերունի օդաչուն:

-Մեր ընկերն է,- փորձեց ինձ արդարացնել Ֆիզկուլտուրայի ուսուցիչը,- մտերմաբար է ասում:

-Միևնույն է՝ սխալ էր, չպիտի ասեր,-պնդեց նախկին օդաչուն:

Ես առիթ էի փնտրում մեղմելու ծերունու զայրույթը: Երկնքից մարդատար օդանավի հռնդյուն լսվեց: Ձեռքով ցույց տալով օդնավն, ասացի.

-Օդաչուները այդքան շուտ չեն վիրավորվում:

-Միևնույն է՝ տեղին չէր ասածը,-պնդեց օդաչուն: